# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 30-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ.ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 9 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան գյուղական համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի թիվ- 9 հերթական նիստի օրակարգը՝

1. Ղուկասավան համայնքի 2019թ. բյուջեի հաստատման մասին
2. Ղուկասավան համայնքի ղեկավարի վարձատրության չափի, նրա աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և դրանց պաշտոնային դրույքաչափերի, ինչպես նաև <<Սաթենի մ/մ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի վարձատրության չափի, նրա աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և դրանց պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին
3. 2018թ. Ղուկասավանի համայնքապետարանի և <<Սաթենի մ/մ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների գույքագրման արդյունքները հաստատելու մասին:
4. Համայնքի ավագանու 09.11.2018թ. թիվ 27-Ն որոշումը անվավեր ճանաչելու մասին
5. Ղուկասավան համայնքի 2019թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանելու մասին :

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 31-Ն

## ՂՈՒԿԱՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2019թ. ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ղուկասավան համայնքի 2019թ. բյուջեն համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արարատի մարզի
Ղուկասավան համայնքի
ավագանու 30.11.2018թ. 31-Ն
որոշման

# 2019թ. ՂՈՒԿԱՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ղուկասավան համայնքի 2019թ. վարչական բյուջեն, ընդամենը եկամուտները և ծախսերը *53163.2* հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

ա. Հարկեր և տուրքեր- 12771.1 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

աա. Գույքային հարկեր անշարժ գույքից- 6429.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

աբ. Գույքահարկ շենք և շինությունների- 2500.0 հազար ՀՀ դրամ:

ագ. Հողի հարկ ֆիզիկական անձանցից – 3929.0 հազար ՀՀ դրամ,

բ. Գույքահարկ փոխադրամիջոցներից- 6062.0 հազար ՀՀ դրամ:

գ. Տեղական տուրքեր - 280.1 հազար ՀՀ դրամ, որից

գա.Շինարարության թույլտվության հիմնական շինությունների համար – 22.5 հազար ՀՀ դրամ

գբ. Ծխախոտի վաճառքի թույլտվություն- 93.6 հազար ՀՀ դրամ,

գգ. Խմիչքների վաճառքի թույլտվություն – 133.8 հազար ՀՀ դրամ

գդ. Հանրային սննդի իրացման թույլտվություն – 30.2 հազար դրամ:

դ. Պաշտոնական դրամաշնորհներ- 36330.1 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

դա. ընթացիկ ներքին դրամաշնորհներ (դոտացիա) - 36330.1 հազար ՀՀ դրամ,

ե. Գույքի վարձակալությունից մուտքեր- 947.0 հազար ՀՀ դրամ, որից

եա. Հողերի վարձակալությունից - 587.0 հազար ՀՀ դրամ

եբ. Այլ գույքի վարձակալություն – 360.0 հազար ՀՀ դրամ:

գ. Վարչական ծախսեր- 3115.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

գա. Տեղական վճարներ աղբահանության համար- 1600.0 հազար ՀՀ դրամ

գբ. Օբյեկտների շահագործման համար- 6.0 հազար ՀՀ դրամ

գգ. Օբյեկտների ավարտական ակտի փաստագրման համար - 9.0:

գգ. Ծնողական գումար – 1500.0 հազար դրամ

2. 2019թ.-ի Ղուկասավան համայնքի վարչական բյուջեի ծախսերի բաշխումը՝

ա. 01.1.1 օրենսդիր և գործադիր մարմիններ. պետական կառավարում ընդամենը- 23044.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

աա. 4111 աշխատավարձ- 19168.0 հազար ՀՀ դրամ

աբ. 4212 էլեկտրական էներգիա- 800.0 հազար ՀՀ դրամ

ագ. 4213 կոմունալ ծառայություն- 230.0 հազար ՀՀ դրամ

ադ. 4214 կապի ծառայություն- 250.0 հազար ՀՀ դրամ

աե. 4215 ապահովագրական ծախս – 98.0 հազար ՀՀ դրամ

ազ. 4221 ներքին գործուղում- 80.0 հազար ՀՀ դրամ

աէ. 4232 համակարգչային ծառայություն- 155.0 հազար ՀՀ դրամ

աը. 4234 տեղեկատվական ծառայություն – 125.0 հազար ՀՀ դրամ

աթ. 4241 մասնագիտական ծառայություն – 88.0 հազար ՀՀ դրամ

աժ. 4252 սարքավորումների ընթացիկ նորոգում- 600.0 հազար ՀՀ դրամ

աի. 4261 գրասենյակային նյութեր- 200.0 հազար ՀՀ դրամ

ալ. 4264 տրանսպորտային նյութեր- 1200.0 հազար ՀՀ դրամ

ախ. 4269 հատուկ նպատակային այլ նյութեր – 50.0 հազար դրամ

բ. 01.6.1 ընդհանուր բնույթի հանրային ծառայություն, ընդամենը 500.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

բա. 4241 մասնագիտական ծառայություն- 200.0 հազար ՀՀ դրամ

բբ. 4729 այլ նպաստներ բյուջեից – 300.0 հազար ՀՀ դրամ

գ. 05.1.1 աղբահանություն, ընդամենը 1600.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

գա. 4213 կոմունալ ծառայություններ- 1600.0 հազար ՀՀ դրամ

դ. 06.4.1 փողոցների լուսավորում, ընդամենը 750.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

դա. 4212 էլեկտրական էներգիա- 700.0 հազար ՀՀ դրամ

դբ. 4269 հատուկ նպատակային այլ նյութեր- 50.0 հազար ՀՀ դրամ

ե. 08.2.4 - այլ մշակութային կազմակերպություններ, ընդամենը 1000.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

եա. 4239 ընդհանուր բնույթի այլ ծառայություն- 550.0 հազար ՀՀ դրամ

եբ. 4269 հատուկ նպատակային այլ նյութեր- 450.0 հազար ՀՀ դրամ

զ. 04.2.1 գյուղատնտեսություն, ընդամենը 762.0 հազար ՀՀ դրամ,այդ թվում՝

զա. 4111 -աշխատավարձ – 612.0 հազար ՀՀ դրամ

զբ. 4241մասնագիտական ծառայություններ – 150.0 հազար ՀՀ դրամ

է. 01.3.3 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ, ընդամենը 43.2 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

էա. 4232 համակարգչային ծառայություններ- 43.2 հազար ՀՀ դրամ:

ը. 08.2.1 գրադարան, ընդամենը 1092.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

ըա. 4111 աշխատավարձ- 1092.0 հազար ՀՀ դրամ:

թ. 08.2.3 կուլտուրայի տուն, ընդամենը 5282.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

թա. 4111 աշխատավարձ- 5282.0 հազար ՀՀ դրամ:

ժ. 08.1.1 հանգստի և սպորտի ծառայություն, ընդամենը 40.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

ժա. 4726 այլ նպաստներ – 40.0 հազար ՀՀ դրամ:

ի. 09.1.1 նախադպրոցական կրթություն, ընդամենը 15000.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

իա. 4637 ընթացիկ դրամաշնորհ ՀՈԱԿ-ին -15000.0 հազար ՀՀ դրամ:

լ. 11.1.2 համայնքի պահուստային ֆոնդ, ընդամենը 1820.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

լա. 4891 պահուստային միջոցներ- 1820.0 հազար ՀՀ դրամ:

խ. 09.2.2 միջնակարգ ընդհանուր կրթություն, ընդամենը 150.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝

խա. 4729 այլ նպաստներ 150.0 հազար ՀՀ դրամ:

ծ. 10.7.1 Սոց. հատուկ արտոնություններ, ընդամենը 2080.0 հազար ՀՀ դրամ, այդ թվում

ծա. 4726 հուղարկավորության նպաստներ 480.0 հազար ՀՀ դրամ

ծբ. 4729 այլ նպաստներ – 1600.0 հազար ՀՀ դրամ:

3. Հաստատել սույն որոշման 2-րդ կետով սահմանված հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների հետևյալ չափերով՝

Հավելված1.

| Բյուջետային դասակարգման հոդվածների անվանումը | | Գումարը հազար դրամներով |
|---|---|---|
| Ընդամենը ծախսերը այդ թվում՝ | | 53163.2 |
| 4111 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 26154.0 |
| 4221 | Ներքին գործուղում | 80.0 |
| 4213 | Կոմունալ ծառայություններ | 1830.0 |
| 4212 | Էներգետիկ ծառայություններ | 1500.0 |
| 4214 | Կապի ծառայություններ | 250.0 |
| 4215 | Ապահովագրության ծախս | 98.0 |
| 4232 | Համակարգչային ծառայություն | 198.2 |
| 4234 | Տեղեկատվական ծառայություններ | 125.0 |
| 4239 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 550.0 |
| 4241 | Մասնագիտական ծառայություններ | 438.0 |
| 4252 | Մեքենաների ընթացիկ նորոգում | 600.0 |

| | | |
|---|---|---|
| 4261 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 200.0 |
| 4264 | Տրանսպորտային նյութեր | 1200.0 |
| 4269 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 550.0 |
| 4637 | Ընթացիկ դրամաշն. պետական և համ. ոչ առև. կազմ. | 15000.0 |
| 4729 | Այլ նպաստներ բյուջեից | 2090.0 |
| 4726 | Հուղարկավորության նպաստ | 480.0 |
| 4891 | Պահուստային միջոցներ | 1820.0 |

4. 2019թ. ֆոնդային բյուջեն հաստատել 3000.0 հզար դրամ այդ թվում՝

ա. վարչական բյուջեի տարեվերջի ազատ մնացորդ 2000.0 հազար դրամ

բ. ֆոնդային բյուջեի տարեվերջի ազատ մնացորդ 1000.0 հազար դրամ

5. 2019թ-ի ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսել 3000.0 հազար դրամ, այդ թվում՝

ա. 09.08.01- կրթություն այլ դասերի չպատկանող նախահաշվին 3000.0 հազար դրամ

աա. 5113 շենք շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածը նախատեսել 3000.0 հազար դրամ:

ԴՈՒԿԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 32-Ա

ՂՈՒԿԱՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ՆՐԱ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ <<ՍԱԹԵՆԻ>> ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ՆՐԱ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ղուկասավանի համայնքապետի վարձատրության չափը, նրա աշխատակազմի թվաքանակը հաստիքացուցակը և դրանց պաշտոնային դրույքաչափերը, ինչպես նաև <<Սաթենի>> մսուր մանկապարտեզ Համայնքային Ոչ առևտրային Կազմակերպության տնօրենի վարձատրության չափը, նրա աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և դրանց պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1, հավելված 2:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված 1

Դուկասավան գյուղական համայնքի ավագանու

2018 թվականի նոյեմբերի 30 N 32- Ա որոշման

# 2019թ. ԴՈՒԿԱՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 13

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 281.0 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 185.0 |
| Համայնքային անասնաբույժ | 0.70 | 73.0 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 175.0 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 174.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 173.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-2/ | 1 | 173.0 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 168.0 |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/ | 1 | 167.0 |
| ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| Կուլտուրայի տան վարիչ | 1 | 170.0 |
| Գրադարանավար | 1 | 91.0 |

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Օպերատոր | 1 | 168.0 |
| Պահակ | 1 | 88.0 |
| Հավաքարար | 1 | 83.0 |
| Այգեպան | 1 | 95.0 |

Համայնքի ղեկավար՝ Ա. Վարդանյան

Հավելված2.

Ղուկասավան գյուղական համայնքի ավագանու
2018 թվականի նոյեմբերի 30 N 32- Ա որոշման

2019թ. «Սաթենի.մ/մ» ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի

հաստիքացուցակը

| Հ/Հ | Հաստիքը | Դրույքը | Դրույքաչափը |
|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 132276 դրամ |
| 2. | Բուժքույր | 0.5 | 119200 դրամ |
| 3. | Դաստիարակ | 0.625 | 132276 դրամ |
| 4. | Դաստիարակ | 1.875 | 141644 դրամ |
| 5. | Երաժշտական դաստիարակ | 0.5 | 141644 դրամ |
| 6. | Խոհարար | 1 | 72752 դրամ |
| 7. | Դաստիարակի օգնական | 1.1 | 72754 դրամ |
| 8. | Գործավար | 0.5 | 119200 դրամ |
| 9. | Դաստիարակի օգնական | 1.1 | 77904 դրամ |
| 10. | Տնտեսվար | 0.5 | 119200 դրամ |
| 11. | Պահակ | 1 | 72754 դրամ |
| 12. | Լվացարար | 0.75 | 79500 դրամ |
| 13. | Հաշվապահ | 0.5 | 132276 դրամ |
| 14. | Ընդամենը | | 1413380 դրամ |

Համայնքի ղեկավար` Ա. Վարդանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 33-Ա

### ՂՈՒԿԱՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ՍԱԹԵՆԻ>> ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 32-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ղուկասավան համայնքի հաշվեկշռում գտնվող հիմնական միջոցների գույքագրման արդյունքները՝ համաձայն հավելված 1, հավելված 2:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.11.2018թ.
թիվ-33--Ա ՈՐՈՇՄԱՆ
ՀԱՎԵԼՎԱԾ1

# ՂՈՒԿԱՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ԳՐԱԴԱՐԱՆԻ, ԿՈՒԼՏՈՒՐԱԻ ՏԱՆ, ԲՈՒԺԿԵՏԻ ԵՎ <<ՍԱԹԵՆԻ>>Մ/Մ ՀՈԱԿ-Ի 2018Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մենք՝ Ղուկասավանի համայնքապետարանի գույքագրման հանձնաժողովի անդամներս՝ նախագահ՝ Մոս Վանոյան, անդամներ՝ Բավական Մարկոսյան, Արշալույս Մինասյան, Սաքիկ Եղիազարյան, Շուշանիկ Հագեյան, Թամարա Գալստյան, Լիլիթ Ներսեսյան, Ալբերտ Մովսիսյան փաստացի ստուգում կատարեցինք Ղուկասավանի համայնքապետարանի գույքի առկայության վերաբերյալ: Ստուգումից պարզվեց, որ պակասորդ և ավելցուկ չի արձանագրվել: Կից ներկայացնում ենք գույքացուցակը:

| N | Անվանումը | Փաստացի քանակը | Հաշվապահական մնացորդ |
|---|---|---|---|
| 1. | Մանկապարտեզի շենք. քարե պարիսպ | 1 | 1 |
| 2. | Արտեզյան խորքային հոր | 1 | 1 |
| 3. | Ակումբի շենք | 1 | 1 |
| 4. | Մանկապարտեզի շենք | 1 | 1 |
| 5. | Բուժ. ամբուլատորիայի շենք | 1 | 1 |
| 6. | Ոռոգման ցանց | 1 | 1 |
| 7. | Ասֆալտապատ ճանապարհ | 1 | 1 |
| 8. | Ջրատար ցանց կիսախողովակ | 1 | 1 |
| 9. | Տրանսֆորմատոր Տ/Մ 400/100 | 1 | 1 |
| 10. | Շկաֆ | 1 | 1 |
| 11. | Էլեկտրական պլիտա | 1 | 1 |
| 12. | Ցերեկային լույս. ցանց | 1 | 1 |
| 13. | Արցախ. ազատ. հուշակոթող | 1 | 1 |
| 14. | Էլեկտրական ենթակայան | 1 | 1 |
| 15. | Գերեզմանատան պատ | 2 | 2 |
| 16. | 0.4 կվ լար. լուսա. ցանց | 1 | 1 |
| 17. | Կուլտ. տան շրջակ. քարե պարիսպ | 1 | 1 |
| 18. | Ավտոմեքենա 2004թ. 31105-120 | 1 | 1 |
| 19. | Մարդատար ավտոմեքենա KIA CERATO | 1 | 1 |
| 20. | Գազաբալոնային համակարգ | 1 | 1 |
| 21. | Փափուկ կահույք՝ 2 բազկաթ. 1 բազմոց | 3 | 3 |
| 22. | Գրասեղան | 1 | 1 |
| 23. | Սեղան | 1 | 1 |
| 24. | Մոնիտոր Benq 17 LCD G700A | 1 | 1 |
| 25. | Համակարգիչ PC E4600 INTELDG 31PR | 1 | 1 |
| 26. | Լազերային տպիչ Lasep Jet P1102 | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 27. | Լազերային տպիչ Lasep Jet P1566 | 1 | 1 |
| 28. | Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք CANON I-SENSYS MF 4410 | 1 | 1 |
| 29. | Պոմպ ջեռուցման համակարգի | 1 | 1 |
| 30. | Համակարգիչ P4 | 3 | 3 |
| 31. | Մոնիտոր LG LED 19 E1941 | 1 | 1 |
| 32. | Մոնիտոր Samsung LED 18.5 S19A300 | 1 | 1 |
| 33. | Պատճենահանման սարք CANON | | |
| 34. | Շկաֆ երկաթից | 3 | 3 |
| 35. | Աթոռ փափուկ | 12 | 12 |
| 36. | Պահարան կոմպլեկտ | 2 | 2 |
| 37. | Սեյֆի պահարան | 1 | 1 |
| 38. | Պահարան | 1 | 1 |
| 39. | Գրասեղան պրոֆիլից փոքր | 2 | 2 |
| 40. | Գրասեղան պրոֆիլից միջին | 1 | 1 |
| 41. | Գրասեղան պրոֆիլից մեծ | 1 | 1 |
| 42. | Գրասեղան դիմադիրով և կողադիրով | 1 | 1 |
| 43. | Բնական գազի գիծ | 1 | 1 |
| 44. | Կախիչ | 1 | 1 |
| 45. | Օդակարգավորիչ LGEN | 2 | 2 |
| 46. | Համակարգիչ INTEL | | |
| 47. | UPS MERKCURY | | |
| 48. | Կրեսլո աթոռ | | |
| 49. | Սնուցող սարք MERKCURY 850PRO | | |
| 50. | Սառնարան BIANCA | | |

## 2. Գրադարանի գույք

| N | Անվանումը | Փաստացի քանակը | Հաշվապահական մնացորդ |
|---|---|---|---|
| 1. | Գրական ֆոնդ | 8346 | 8346 |
| 2. | Էտաժերկա | 1 հատ | 1 հատ |
| 3. | Կատալոգի արկղ | 2 հատ | 2 հատ |
| 4. | Սեղան 1 տումբանի | 1 հատ | 1 հատ |
| 5. | Երկաթյա արկղ | 8 հատ | 8 հատ |
| 6. | Աթոռ կիսափափուկ | 2 հատ | 2 հատ |
| 7. | Կրակ մարիչ | 1 հատ | 1 հատ |

## 3. Կուլտուրայի տան գույք

| N | Անվանումը | Փաստացի քանակը | Հաշվապահական մնացորդ |
|---|---|---|---|
| 1. | Ակորդեոն | 1 | 1 |
| 2. | Սեղան 1 տումբանի | 1 | 1 |
| 3. | Կարնետ պատիանով | 1 | 1 |
| 4. | Դուդուկ | 2 | 2 |
| 5. | Թատերական աթոռներ | 180 | 180 |

## 4. Բուժամբուլատորիայի գույք

| N | Անվանումը | Փաստացի քանակը | Հաշվապահական մնացորդ |
|---|---|---|---|
| 1. | էլ.սրտագրման սարք ECG101G | 1 | 1 |
| 2. | Ապակեպատ պահարան 2 դռնանի | 2 | 2 |
| 3. | էլեկտրոնային կշեռք հասակաչափով | 1 | 1 |
| 4. | 1-ին բուժ օգն. գործիքների հավաքածու | 1 | 1 |
| 5. | Աթոռ | 6 | 6 |
| 6. | պահարան | 3 | 3 |
| 7. | Ընդունարանի սեղան | 1 | 1 |
| 8. | Կախիչ | 1 | 1 |
| 9. | Աշխատանքային սեղան | 4 | 4 |
| 10. | Հիվանդանոցային աթոռ | 3 | 3 |
| 11. | Ընդունարանի պահարան | 1 | 1 |

Գույքագրման հանձնաժողովի

Նախագահ՝ Սոս Վանոյան - համայնքապետի տեղակալ

Անդամներ՝ Բավական Մարկոսյան- առաջատար մասնագետ /գլխ. հաշվապահ/

Արշալույս Մինասյան - առաջին կարգի մասնագետ /գանձապահ/

Սաթիկ Եղիազարյան - գրադարանավարուհի

Շուշանիկ Հազեյան - կուլտուրայի տան վարիչ

Թամարա Գալստյան - «Սաթենի»մ/մ-ի տնօրեն

Լիլիթ Ներսեսյան - «Սաթենի»մ/մ-ի հաշվապահ

Ալբերտ Մովսիսյան - ավագանի

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.11.2018թ.
թիվ-33--Ա ՈՐՈՇՄԱՆ
ՀԱՎԵԼՎԱԾ 2

# <<ՍԱԹԵՆԻ>>Մ/Մ ՀՈԱԿ-Ի 2018Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Մենք՝ Ղուկասավան համայնքի <<Սաթենի>> մսուր մանկապարտեզի համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի գույքագրման հանձնաժողովի անդամներս՝ նախագահ Սոս Վանոյան համայնքի ղեկավարի տեղակալ, Բավական Մարկոսյան աշխատակազմի առաջատար մասնագետ հաշվապահ,Արշալույս Մինասյան առաջին կարգի մասնագետ գանձապահ, Շուշանիկ Յազեյան կուլտուրայի տան վարիչ, Սաթիկ Եղիազարյան գրադարանավար, Թամարա Գալստյան <<Սաթենի մ/մ>>տնօրեն, Լիլիթ Ներսեսյան<<Սաթենի մ/մ>>հաշվապահ, Ալբերտ Մովսիսյան Ղուկասավան համայնքի ավագանու անդամ կատարեցին մանկապարտեզի գույքի գույքագրում: Ստուգումից պարզվեց, որ ավելցուկ և պակասորդ չի արձանագրվել:

Կից ներկայացնում ենք գույքացուցակը:

1. Մանկապարտեզի հիմնական միջոցներ՝

| N | Անվանումը | Փաստացի | Հաշվապահական մնացորդ |
|---|---|---|---|
| 1 | Մանկապարտեզի շենք | 1 | 1 |
| 2 | Դաշնամուր | 1 | 1 |
| 3 | սինթեզատոր | 1 | 1 |
| 4 | Ջեռուստացույց SUPRA | 2 | 2 |
| 5 | Գազօջախ ATLAS | 1 | 1 |
| 6 | Գեղարվեստական նկարներ | 32 | 32 |
| 7 | Պահարանի կոմպլեկտ | 1 | 1 |
| 8 | Սեղան 2 տումբանի | 4 | 4 |
| 9 | Կավրալիտ | 64քմ | 64քմ |
| 10 | տակդիր | 1 | 1 |
| 11 | փոշեկուլ | 1 | 1 |
| 12 | Լվացքի մեքենա LG | 1 | 1 |
| 13 | համակարգիչ | 1 | 1 |
| 14 | Տպիչ CANON | 1 | 1 |
| 15 | Նվագարկիչ LG | 1 | 1 |
| 16 | Սառնարան TOSHIBA | 1 | 1 |
| 17 | Ջրատաքացուցիչ GLOBUS | 1 | 1 |
| 18 | Ջեռոց ATLAS | 1 | 1 |
| 19 | Մսաղաց ZELMER | 1 | 1 |
| 20 | կշեռք ZELMER | 1 | 1 |
| 21 | ստենդ | 1 | 1 |
| 22 | Տաքացուցիչ AKAI | 2 | 2 |
| 23 | UPS invader | 1 | 1 |
| 24 | Սառնարան 4 դռնանի | 1 | 1 |
| 25 | Մանկական սղարան մեծ պլ. | 1 | 1 |
| 26 | Մանկական սղարան փոքր պլ. | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 27 | Ճոճանակ պլ.2 տեղ | 1 | 1 |
| 28 | Սղարան երկաթյա | 1 | 1 |
| 29 | Ունիվերսալ կառուսել | 1 | 1 |
| 30 | Տնակ պլաստմասե | 1 | 1 |
| 31 | Տնակ երկաթյա | 1 | 1 |
| 32 | Պտույտ D-1.5m | 1 | 1 |
| 33 | խոհանոց | 1 | 1 |
| 34 | խոհանոցի սեղան | 2 | 2 |
| 35 | թունել | 1 | 1 |
| 36 | Գրատախտակ շարժական | 1 | 1 |
| 37 | Ճոճանակ 2 տեղ | 2 | 2 |
| 38 | դինամիկ ADMIRAL | 1 | 1 |

2.Խոհանոցի ապրանքներ

| N | Անվանումը | Փաստացի | Հաշվապահական մնացորդ |
|---|---|---|---|
| 1. | Կաստրուլկա սուպի | 3 | 3 |
| 2. | Երեսի սրբիչ | 4 | 4 |
| 3. | Դանակ | 4 | 4 |
| 4. | Կաղամբի դանակ | 1 | 1 |
| 5. | Բանջարեղեն կտրատելու տախ. | 9 | 9 |
| 6. | Գդալ ճաշի | 12 | 12 |
| 7. | Դանակ փոքր սղոց | 2 | 2 |
| 8. | Ջրի բաք | 1 | 1 |
| 9. | թավա | 3 | 3 |
| 10. | Քամիչ փլավի մեծ | 1 | 1 |
| 11. | Դույլ պլասմասե | 1 | 1 |
| 12. | Ափսե զակուսկի | 12 | 12 |
| 13. | թրմիչ | 1 | 1 |
| 14. | Թաս պլ.մեծ | 2 | 2 |
| 15. | Թաս պլ. փոքր | 1 | 1 |
| 16. | Պուդնոս փոքր | 1 | 1 |
| 17. | Ջազվա մեծ | 1 | 1 |
| 18. | Ջազվա փոքր | 1 | 1 |
| 19. | Սրբիչ թեյի | 6 | 6 |
| 20. | կարազաման | 2 | 2 |
| 21. | պոչուկ | 1 | 1 |
| 22. | Ափսե մեծ | 2 | 2 |
| 23. | Կարտոֆիլի ճզմիչ | 1 | 1 |
| 24. | սավոկ | 1 | 1 |
| 25. | Միս քամելու ցանց | 1 | 1 |
| 26. | խառնիչ | 1 | 1 |
| 27. | շերեփ | 3 | 3 |
| 28. | Պատառաքաղ փոքր 12 հ | 1 | 1 |
| 29. | Սկուտեղ պլաստմասե | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 30. | Քերիչ 4 անկյուն | 2 | 2 |
| 31. | բացիչ | 1 | 1 |
| 32. | Նարոր խոհանոցի | 1 | 1 |
| 33. | Սուրճի բաժակներ | 3 | 3 |
| 34. | խալաթ | 3 | 3 |
| 35. | Պլասմասե տարա | 10 | 10 |
| 36. | Հյութի բաժակներ 12հ | 2 | 2 |
| 37. | մոխրաման | 1 | 1 |
| 38. | Քամիչ պոչով | 1 | 1 |
| 39. | Պլաստմասե տարա | 4 | 4 |
| 40. | տագդիր գդալի | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 41 | Կշեռք ZELMER փոքր | 1 | 1 |
| 42 | Պլաստմասե տարա փոքր | 2 | 2 |
| 43 | Ծանց լվացարանի | 2 | 2 |
| 44 | մկրատ | 1 | 1 |
| 45 | Նիկելյա թեյնիկ | 2 | 2 |
| 46 | Բաժակ օղու 12 հ | 2 | 2 |
| 47 | Ձագար ցանցավոր | 1 | 1 |
| 48 | աղաման | 1 | 1 |
| 49 | կախիչ | 1 | 1 |
| 50 | Թաս 7 լ | 1 | 1 |
| 51 | Թաս 6 լ | 1 | 1 |
| 52 | Տարա hobi 1.2 լ | 2 | 2 |
| 53 | Փոխանցման տուփ | 1 | 1 |

3.Ավագ խմբի ապրանք

| N | Անվանումը | Փաստացի | Հաշվապահական մնացորդ |
|---|---|---|---|
| 1. | վերմակ | 30 | 30 |
| 2. | Աթոռ մանկական | 30 | 30 |
| 3. | պոլկա | 2 | 2 |
| 4. | Սեղան մանկական | 12 | 12 |
| 5. | մահճակալ | 33 | 33 |
| 6. | մատրաս | 36 | 36 |
| 7. | Պահարան հագուստի | 6 | 6 |
| 8. | Պահարան քարտուղարի | 1 | 1 |
| 9 | Պահարան խոհ. տնտեսական | 2 | 2 |
| 10 | կարնիզ | 9 | 9 |
| 11 | Ափսե խորը | 30 | 30 |
| 12 | Ճաշի գդալ | 30 | 30 |
| 13 | Դույլ պլասմասե | 2 | 2 |
| 14 | Խաղալիքի արկղ փայտե | 2 | 2 |
| 15 | Հեքիաթի գիրք | 2 | 2 |
| 16 | դոմինո | 4 | 4 |
| 17 | Թաս պլասմասե | 1 | 1 |
| 18 | կուբիկ | 2 | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| 19 | Դույլ աղբի երկաթյա | 1 | 1 |
| 20 | կուբիկ | 3 | 3 |
| 21 | Ամանի սրբիչ | 1 | 1 |
| 22 | Սեղանի թենիս | 1 | 1 |
| 23 | Զուգարանի խոզանակ | 1 | 1 |
| 24 | պոչուկ | 1 | 1 |
| 25 | սավոկ | 1 | 1 |
| 26 | Օճառաման | 1 | 1 |
| 27 | Պոլի փայտ | 1 | 1 |
| 28 | Կուբիկ տառեր | 1 | 1 |
| 29 | Կուբիկ թվեր | 1 | 1 |
| 30 | Թվադարան տառադարան | 2 | 2 |
| 31 | Տառեր հովհար | 1 | 1 |
| 32 | ավտոմեքենա | 3 | 3 |
| 33 | Խաղալիք պլասմասե գործիքներ | 1 | 1 |
| 34 | Մանկական խաղ փայտյա | 1 | 1 |
| 35 | Մանկական սայլակ | 1 | 1 |
| 36 | Խաղալիք լվացքի մեքենա | 1 | 1 |
| 37 | սպասք | 1 | 1 |
| 38 | Պլաս. Մրգերի հավաքածու | 1 | 1 |
| 39 | Խաղ օղակով | 1 | 1 |
| 40 | Խաղ բժշկական հավաքածու | 1 | 1 |
| 41 | տիկնիկ | 1 | 1 |
| 42 | բահ | 2 | 2 |
| 43 | Խաղալիք արդուկի հավաքածու | 1 | 1 |
| 44 | Խաղալիք խանութի հավաքածու | 1 | 1 |
| 45 | Խաղալիք օրորոց մեծ | 1 | 1 |
| 46 | Խաղալիք ինքնագնաց | 1 | 1 |
| 47 | Խաղ սպասքի հավ. միջին | 1 | 1 |
| 48 | կենդանիներ | 1 | 1 |
| 49 | Մանկական հեռախոս | 1 | 1 |
| 50 | Թեյի բաժակներ 12 հ | 2 | 2 |
| 51 | Փայտե ժամացույց | 1 | 1 |
| 52 | Կոնստրուկտոր պլ. դետալներ | 1 | 1 |
| 53 | Փայտե փազլ | 1 | 1 |
| 54 | Խոսող այբենարան | 1 | 1 |
| 55 | Պլաս.մարդուկ տուփով | 1 | 1 |
| 56 | Պլաստիլին տարայով 6հ | 1 | 1 |
| 57 | Գրատախտակ փայտե մագնիսով | 1 | 1 |
| 58 | Խաղալիք կոնստրուկտոր ծաղիկն | 1 | 1 |
| 59 | Թվաբանություն քարտերով | 1 | 1 |
| 60 | Ռուբիկ կուբիկ | 1 | 1 |
| 61 | Խաղալիքի պարկ | 2 | 2 |
| 62 | Գնացք փայտե մեծ | 1 | 1 |
| 63 | Գնացք փայտե միջին | 1 | 1 |
| 64 | Խաղ գտիր զույգը | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 65 | փազլ | 2 | 2 |
| 66 | Վրձին | 2 | 2 |
| 67 | Լեգո սուպեր միքս | 1 | 1 |
| 68 | Տաքացուցիչ էլեկտրական | 1 | 1 |
| 69 | Ջերմաչափ փայտյա | 1 | 1 |

4.Կրտսեր խմբի ապրանքներ

| N | Անվանում | փաստացի | Հաշվ. մնացորդ |
|---|---|---|---|
| 1 | Աթոռ մանկական փայտյա | 30 | 30 |
| 2 | Սրբիչ ամանի | 2 | 2 |
| 3 | վերմակ | 25 | 25 |
| 4 | մատրաս | 20 | 20 |
| 5 | Մահճակալ | 32 | 32 |
| 6 | Սեղան մանկական | 8 | 8 |
| 7 | վարագույր | 40մ | 40մ |
| 8 | պոլկա | 2 | 2 |
| 9 | կառնիզ | 7 | 7 |
| 10 | Ափսե խորը | 37 | 37 |
| 11 | Դույլ պլասմասե | 2 | 2 |
| 12 | Հագուստի պահարան | 6 | 6 |
| 13 | Պահարան քարտուղարի | 1 | 1 |
| 14 | Պահարան խոհանոցի տնտ. | 2 | 2 |
| 15 | Խաղալիքի պարկ | 2 | 2 |
| 16 | Գրատախտակ շարժական | 1 | 1 |
| 17 | արդուկ | 1 | 1 |
| 18 | Գդալ ճաշի | 23 | 23 |
| 19 | Սկուտեղ պլասմասե | 1 | 1 |
| 20 | Զուգարանի խոզանակ | 1 | 1 |
| 21 | Պոչուկ | 1 | 1 |
| 22 | օճառաման | 1 | 1 |
| 23 | սավոկ | 1 | 1 |
| 24 | Թվեր տետր | 1 | 1 |
| 25 | Պոլի փայտ | 1 | 1 |
| 26 | զոզնոց | 1 | 1 |
| 27 | շերեփ | 1 | 1 |
| 28 | Փազլ արջուկներ | 1 | 1 |
| 29 | փազլլ | 4 | 4 |
| 30 | Թվերով զնացք | 1 | 1 |
| 31 | Խաղալիք ինքնագնաց | 1 | 1 |
| 32 | Խաղալիք օրորոց | 1 | 1 |
| 33 | Կենդանիների կոմպլեկտ | 1 | 1 |
| 34 | Սփռոց կլինկորի | 1.5մ | 1.5մ |
| 35 | Գրասենյակային աղբաման | 1 | 1 |
| 36 | Ուսուցողական քարտեր | 3 | 3 |
| 37 | Հեքիաթի գիրք | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 38 | Հանելուկների գիրք | 1 | 1 |
| 39 | բալոն | 1 | 1 |
| 40 | Գունավոր կուբիկներ | 1 | 1 |
| 41 | գրչաման | 6 | 6 |
| 42 | դրոշ | 1 | 1 |
| 43 | Ծեփամածիկի տախտակ | 22 | 22 |
| 44 | ամրակ | 1 | 1 |
| 45 | կարիչ | 1 | 1 |
| 46 | դակիչ | 1 | 1 |
| 47 | Երկարացման լար | 1 | 1 |
| 48 | Փոխանցման տուփ | 1 | 1 |
| 49 | Փայտե ժամացույց | | |
| 50 | Կոնստրուկտոր պլ. դետալներ | 1 | 1 |
| 51 | Փայտյա փազլ | 1 | 1 |
| 52 | Խոսող այբենարան | 1 | 1 |
| 53 | Պլաստիրին տարայով 6հ | 1 | 1 |
| 54 | Ծեփագործության հավաքացու | 1 | 1 |
| 55 | Գրատախտակ փայտե մագնիսով | 1 | 1 |
| 56 | Խաղ կոնստրուկտոր ծաղիկներ | 1 | 1 |
| 57 | Գնացք փայտե մեծ | 1 | 1 |
| 58 | Գնացք փայտե փոքր | 1 | 1 |
| 59 | Աշխարհի քարտեզ | 1 | 1 |
| 60 | Երաժշտական քարտեր | 1 | 1 |
| 61 | Խաղ գտիր զույգը | 1 | 1 |
| 62 | Քարտեր փոքրերի համար | 6 | 6 |
| 63 | լոտո | 1 | 1 |
| 64 | դոմինո | 2 | 2 |
| 65 | վրձին | 1 | 1 |
| 66 | Տաքացուցիչ էլեկտրական | 1 | 1 |
| 67 | Ցերմաչափ փայտյա | 1 | 1 |

**5.Դահլիճ և միջանցք**

| N | անվանումը | փաստացի | Հաշվապ. Մնաց. |
|---|---|---|---|
| 1 | Պահարան խոհանոցի տնտ. | 6 | 6 |
| 2 | Մարմնամարզական նստարան | 2 | 2 |
| 3 | Մեծ աթոռ | 12 | 12 |
| 4 | Մերսման գնդակներ | 2 | 2 |
| 5 | Աստիճան բացովի | 1 | 1 |
| 6 | վարագույր | 58մ | 58մ |
| 7 | Գունավոր գնդակներ | 2 | 2 |
| 8 | Ռեզինե գնդակներ | 8 | 8 |
| 9 | Սուլիչ | 2 | 2 |
| 10 | Պարան ձգվող | 2 | 2 |
| 11 | Սպորտային մատրաս | 2 | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | Բուլավաներ տուփով | 2 | 2 |
| 13 | Գնդակ մեծ | 8 | 8 |
| 14 | Գնդակ թենիսի | 6 | 6 |
| 15 | Պարան ցատկելու | 6 | 6 |
| 16 | Մեծ կանգնակ | 2 | 2 |
| 17 | Պարան աստիճան | 1 | 1 |
| 18 | Տաքացուցիչ էլեկտրական | 1 | 1 |
| 19 | Ջերմաչափի փայտե | 1 | 1 |

6.Բուժ սենյակ

| N | անվանումը | փաստացի | Հաշվապահ.մնաց |
|---|---|---|---|
| 1 | Ջերմաչափ | 3 | 3 |
| 2 | Սեղան քարտուղարի | 2 | 2 |
| 3 | Սեղանի հավաքածու | 1 | 1 |
| 4 | Մկրատ մեծ | 1 | 1 |
| 5 | խալաթ | 1 | 1 |
| 6 | Ճնշման սարք | 1 | 1 |
| 7 | բամբակ | 1 | 1 |
| 8 | Շպրից 5մլ | 2 | 2 |
| 9 | Շպրից 10մլ | 2 | 2 |
| 10 | յոդ | 1 | 1 |
| 11 | սպիրտ | 1 | 1 |
| 12 | Հաշվիչ | 1 | 1 |

7. Խմբերի չօգտագործվող ապրանքներ

| N | անվանում | փաստացի | Հաշվապահ մնաց |
|---|---|---|---|
| 1 | Մատրաս | 2 | 2 |
| 2 | մահճակալ | 7 | 7 |
| 3 | Պահարան հագուստի | 6 | 6 |

8.Պահեստի սննդամթերքի մնացորդ

| N | Անվանում | փաստացի | Հաշվապ. մնաց |
|---|---|---|---|
| 1 | շաքարավազ | 19.25 | 19.25 |
| 2 | մակարոնեղեն | 1.3 | 1.3 |
| 3 | ձավար | 2.35 | 2.35 |
| 4 | ոլոռ | 1.9 | 1.9 |
| 5 | կիսել | 0.6 | 0.6 |
| 6 | կակաո | 0.15 | 0.15 |
| 7 | Սև պղպեղ | 0.1 | 0.1 |
| 8 | սպիտակաձավար | 3.4 | 3.4 |
| 9 | ջեմ | 2.6 | 2.6 |
| 10 | Լիմոնի աղ | 0.08 | 0.08 |

Գույքագրման հանձնաժողովի Նախագահ՝ Ս. Վանյան

Անդամներ՝

| | |
|---|---|
| Գյ.գլխ.հաշվապահ | Բ.Մարկոսյան |
| Հաշվ. գանձապահ | Ա. Մինասյան |
| Կուլտուրայի տան վարիչ | Ծ. Հազեյան |
| Գրադարանավար | Ս. Եղիազարյան |
| Ավագանու անդամ | Ա. Մովսիյան |
| <<Մաթևնի մ/մ >>տնօրեն | Թ.Գալստյան |
| Հաշվապահ | Լ. Ներսեսյան |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 34-Ն

## ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09.11.2018Թ. ԹԻՎ 27-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ''Նորմատիվ իրավական ակտերի մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ավագանու 09.11.2018թ. թիվ 27-Ն որոշումը ճանաչել անվավեր:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱԺԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՂՈՒԿԱՍԱՎԱՆ
## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ղուկասավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ղուկասավան, 0236 6-28-01; 093-88-44-00 ghukasavan.ararat@mta.gov.am; ghukasavan@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 35-Ն

### 2019թ. ՂՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, << Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Սահմանել Ղուկասավան համայնքի 2019թ. տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹԱՄՈՅԱՆ ԳՈԳՈ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳՐԵՏԱ

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԱՎԵՏԻՔ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԱՇՈՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԽԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Դուկասավան համայնքի ավագանու 30.11.2018թ.

Թիվ ---35--- -Ն որոշման

Հավելված

# 2019թ. ԴՈՒԿԱՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

## 1. Համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Դուկասավան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ս հմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հնգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի

առական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով հմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի -ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝քսանհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար վեց հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հիսուն դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար հարյուր դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար վեց հարյուր դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հիսուն դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանվեց հազար դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազարի դրամ,
դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազարի դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ յոթանասունհինգ հազարի դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր հիսուն դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հիսուն դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր հիսուն դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար հիսուն դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հիսուն դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հիսուն դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հինգ հարյուր հիսուն դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հիսուն դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հիսուն դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար հինգ հարյուր հիսուն դրամ.

11) Ղուկասավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար սահմանել՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար դրամ,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,
գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ հարյուր ութսունյոթ դրամ հինգ լումա
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ յոթանասունհինգ դրամ

12) Ղուկասավան համայնքի խորհրդանիշերը (անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար
ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,
բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,
գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ,
դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ.

..այնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար` օրացուցային տարվա համար` քսանհինգ հազար դրամ.

Սույն որոշումով տեղական տուրքերի սահմանված դրույքաչափերը համայնքի ավագանու որոշմամբ հաշվարկվել են 0.5 գործակցի կիրառմամբ:

**3. Համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝**

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` երեք հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքերն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում` դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` երեք հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքերն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` երկու հազար դրամ.

4) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար` համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար` երկու հազար դրամ.

5) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար` համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով` ամիսը հինգ հազար դրամ.

6)համայնքի տարածքում աղբահանության համար սահմանել վճար յուրաքանչյուր բնակչից ամսեկան 80 դրամ:

7) աղբահանության վճար` առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների 1քմ. մեկ ամսվա համար սահմանել 20 դրամ:

8) աղբահանության վճար` արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների 1քմ մեկ ամսվա համար սահմանել 4 դրամ:

9) աղբահանության վճար` կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինությունների 1քմ մեկ ամսվա համար սահմանել 2 դրամ:

10) անասնաբուժական ծառայություն`

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման ,կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 1000 դրամ

բ. Ծննդօգնություն
- թեթև միջամտություն - 2000 դրամ
- ծանր միջամտություն - 10000 դրամ

գ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում կախված կենդանու տեսակից /բացառությամբ <<գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակահամաճարակային միջոցառումների/ - 200 դրամ/ մանր կենդ./ - 400 դրամ /խոշոր կեն./

դ. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար - 400 դրամ

ե. Ախտահանություն -1քառ. մետր 400 դրամ

զ. միջատազերծում / դեզինսեկցիա/ - 1քառ. մետր 200 դրամ

է. Կրծողների ոչնչացում / դեռատիզացիա / - 1 քառ. մետր 400 դրամ

ը. Արհեստական սերմնավորում -10000 դրամ

Համայնքի ղեկավար Ա. Վարդանյան